ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

05 դեկտեմբերի 2011 թվականի N 178-Ա

ք. Հրազդան

Ս. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N 505-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N 7 որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Սարգիս Մուշեղյանին*** 2011 թվականի դեկտեմբերի 5-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2005 թվականի հունիսի 22-ին կնքված N 70 աշխատանքային պայմանագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Մարինե Ղալայանի*** վրա՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կողմից զբաղեցնելը:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ